ՀՍԽՀ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲՋԻՋԻ

☆

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԿԽ ԿԵՆՏԿՈՄԻ

1934 ՅԵՐԵՎԱՆ

Թարգմ. և սրբ. Ա. Հախվերդյան

Պետհրատի տպարան, Պատվ. 2338, Գլավլ. 8769 Տիրաժ 5000

3 0 JAN 2018

## ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԲՋԻՋԻ

1. Կարմիր Խաչի ընկերության հիմնական. ողակը հանդիսանում է բջիջը, վորն իրեն նպատակ է դնում՝ ակտիվորեն մասնակցել մեր յերկրի սոցիալիստական շինարարությանը, ամրացնել ԽՍՀՄ-ի ռազմա-սանիտարական պաշտպանությունը, առողջացնել աշխատավորության լայն մասսաների աշխատանքի և կենցաղային պայմանները և տարածել նրանց մեջ ռազմա-սանիտարական և առողջապահական գիտելիքներ։ Բջիջն իր աշխատանքները տանում է հոծարակամության, բոլոր անդամների լայն ինքնագործունեության, իսկական ինքնաքննադատության, հեղափոխական զգոնության և ընկերության անդամների շարքերի դասակարգային մաքրության հիմունքներով։

2. Այս խնդիրները իրականացնելու համար բջիջը տանում է հետևյալ աշխատանքները։

### ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ-ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԳԾՈՎ

ա) Բացատրում է աշխատավորության լայն մասսաներին Կարմիր Խաչի ընկերության նպատակն ու անելիքները։ Ներգրավում է իր շարքերը աշխատավորությանը և մասնակից է դարձնում նրանց բջիջի

ակտիվ ամենօրյա պրակտիկ աշխատանքներին, զեկուցումների, դասախոսությունների, զրույցների, Կարմիր Խաչի անկյունների, ցուցահանդեսների կազմակերպումով և պատի թերթերի լույս ընծայելու միջոցով տանում է նրանց մեջ ռազմա-սանիտարական և քաղաքական-դաստիարակչական աշխատանք:

բ) Ակտիվ մասնակցություն է ունենում ձեռնարկության, կոլտնտեսության, խորհտնտեսության, ՄՏԿ-ի և այլոց կուսակցական, պրոֆմիութենական, տնտեսավարական և հասարակական կազմակերպությունների կողմից ընձեռվող՝ տնտեսական-քաղաքական և սանիտարական-առողջապահական միջոցառումների անցկացմանը: Ակտիվ կերպով մասնակցում է ձեռնարկության կողմից բանվորա-գյուղ. Կարմիր բանակի զորամասերի, աշխատանքային դպրոցների, մանկատների, մսուրների և այլ նման հիմնարկների շեֆությունը վերցնելու և իրականացնելու գործին, ցույց տալով նրանց սիստեմատիկ աջակցություն սանիտարական, մասսայական-առողջապահական միջոցառումների անցկացման, մոբիլիզացիայի յենթարկելով այդ խնդիրների շուրջը ձեռնարկության ամբողջ աշխատավորությանը և նրանց ընտանիքի անդամներին:

գ) Իրագործում է Կարմիր Խաչի վերադաս կազմակերպությունների բոլոր վորոշումներն ու ցուցմունքները, անց է կացնում ընկերության կողմից հայտարարված կամպանիաները (դեկադա, վիճակախաղ, կուլտ-պարտավորություններ և այլն) մասնակից դարձնելով այդ կամպանիաներին աշխատավորության լայն մասսաներին:



1-35549 գր

## ՌԱԶՄԱ-ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԳԾՈՎ

ա) Կազմակերպում է ռազմա-սանիտարական գիտելիքներ ուսումնասիրող խմբակներ, լայն կերպով ներգրավելով այդ խմբակներում նաև Կարմիր Խաչի վոչ անդամներին: Կազմակերպում է ռազմա-սանիտարական պուշաղներ (դրուժինաներ):

բ) Բջիջի համապատասխան անդամների առաջադրում է բուժ-տեխնիկների, քույր-տնտեսուհիների, սան-պոստերի պետերի, քաղ-դեկների շրջանային և մարզային դասընթացներն ուղարկելու համար:

Ծանոթություն. Խոշոր արդյունաբերական ձեռնարկություններում այդպիսի դասընթացներ կարող է կազմակերպել ինքը բջիջը:

գ) Սիստեմատիկ կերպով տանում է ռազմա-սանիտարական կադրերի պատրաստողների և վերապատրաստողների հաշվառում:

## ՄԱՍՍԱՅԱԿԱՆ-ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՅԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԳԾՈՎ

ա) Մոբիլիզացիայի յե յենթարկում գործարանի, նորակառույցի, ֆաբրիկայի, խորհտնտեսության, ՄՏԿ-ի, կոլտնտեսության, հիմնարկության և այլոց Կարմիր Խաչի անդամներին և բոլոր աշխատավորներին սանիտարական-առողջապահական միջոցառումներ անցկացնելու համար, վորոնք նպաստում են արդ-ֆինպլանների կատարման, գերակատարման, աշխատանքային դիսցիպլինայի բարձրացման, աշխատավորության աշխատանքի և կենցաղային պայմանների բարելավման:

բ) Ցույց է տալիս գործնական օգնություն ձեռնարկության, խորհտնտեսության, ՄՏԿ, կոլտնտեսության և այլոց մանկամսուրներ, մանկհրապարակներ, լվացքատներ, բաղնիքներ և ցնցուղային սարքավորումներ ու առաջին օգնության կայանների կազմակերպման գործում։

գ) կազմակերպում է սանիտարական պոստեր (կայաններ) ցեխերում, ճաշարաններում, գործարանային հանրակացարաններում, նորակառույցներում, ֆաբրիկաներում, խորհտնտեսություններում, ՄՏԿ-ներում և կոլտնտեսությունների բրիգադներում (առանձնապես դաշտային աշխատանքների ժամանակ)։

դ) Աշխատավորության սանիտարական գիտելիքների մակարդակը բարձրացնելու և մասսաների մեջ առողջապահական սովորույթներ ամրապնդելու համար անց է կացնում սանիտարական-լուսավորական աշխատանք։ Սիստեմատիկ կերպով հետևում է ցեխերի, ճաշարանների, հանրակացարանների, մանկհիմնարկների և այլոց մաքրության, անց է կացնում մաքրության շաբաթօրյակներ, սանիտարական շտուրմներ։

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԾՈՎ

ա) կազմակերպում և հսկում է անդամավճարների իր ժամանակին գանձելուն, ծավալում է ինքնագործունեություն նորա-նոր նյութական միջոցների հայթայթման, հետևում է նյութական միջոցների նպատակահարմար կերպով ծախսելուն։

բ) Ապահովում է վերադաս կոմիտեյին հասանելիք դրամների իր ժամանակին փոխանցումը։



գ) Կազմում է բջիջի նախահաշիվը, տանում է դրամական և նյութեղենի հաշվետվություն և իր ժամանակին ներկայացնում է այդ բոլորը վերադաս կոմիտեյին։

## 3. ԲՋԻՋԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ա) Բջիջները կազմակերպվում են արտադրական սկզբունքով ձեռնարկություններում, խորհտնտեսություններում, ՄՏԿ-ներում, կոլտնտեսություններում, Կարմիր Բանակի զորամասերում, խորհրդային հիմնարկներում, դպրոցներում, բուհերում, տուհերում, բնակվարձկոոպներում վոչ պակաս քան Կարմիր Խաչի 3 անդամի առկայության դեպքում և հաստատվում է վերադաս կոմիտեյի կողմից։

բ) Խոշոր ձեռնարկություններում, կոլտնտեսություններում, խորհտնտեսություններում բջիջները կազմակերպվում են ցեխերում, բրիգադներում, հերթափոխներում։ Այդ բջիջների աշխատանքներին ընթացք տալու և ղեկավարելու համար կազմակերպվում են Կարմիր Խաչի ֆաբրիկա-գործարանային կոմիտեներ։

Ընդհանուր գործարանային, ֆաբրիկային խորհտնտեսային և այլ բջիջներում կամ կոմիտեներում կազմակերպվում են առանձին սեկտորներ (կազմակերպչական-մասսայական, ռազմա-սանիտարական, մասսայական-առողջապահական և ֆինանսա-տնտեսական)

Ծանոթություն. Ցեխային բջիջներում սեկտորներ չեն կազմակերպվում։ Հիշյալ բաժինների աշխատանքները դրվում են ցեխային բջիջի առանձին անդամի կամ նրա նախագահության վրա։

գ. Բջիջի ղեկավարող մարմինը հանդիսանում է անդամների ընդհանուր ժողովը, վորը հրավիրվում է նախագահության կողմից վոչ պակաս յերկու ամիսը մեկ անգամից և համարվում է օրինական ընկերության անդամների կեսից վոչ պակասի ներկայության դեպքում:

դ) Բջիջի ընդհանուր ժողովը հաստատում է աշխատանքի պլանները և բջիջի նախագահության կատարած աշխատանքների հաշվետվությունները: Լըսում է վերստուգիչ հանձնաժողովի հաշվետվությունը, քննարկում է քաղաքական և տնտեսական խնդիրներ, կապակցելով այդ բոլորը Կարմիր Խաչի աշխատանքների հետ, քննության է առնում այս կամ այն արարքների համար, ընկերության անդամներին տուժանքի յենթարկելու խնդիրները:

Բջիջի ընդհանուր ժողովը իր կազմից ընտրում է յերեք հոգուց բաղկացած նախագահություն մի տարի ժամանակով — յերբ անդամների թիվը 3-ից հասնում 20-ի, 5 հոգուց բաղկացած՝ յերբ անդամների թիվը 20-ից հասնում է 50-ի, 7 հոգուց բաղկացած — յերբ անդամների թիվը 500-ից անցնում է և վերստուգիչ հանձնաժողով 3-ից մինչև 5 հոգուց բաղկացած:

Ծանոթություն: Նախագահության և վերստուգիչ հանձնաժողովի անաշխատունակության դեպքում բջիջը անց է կացնում նրանց վաղաժամ վերընտրություն, իսկ յեթե միայն առանձին անդամներն են անաշխատունակ, նրանք նախագահության վորոշմամբ հանվում են նախագահության կազմից և փոխարինվում բջիջի մի ուրիշ անդամով:

ե) Նախագահությունը անց է կացնում կյանքում բջիջի վորոշումներն ու Կարմիր Խաչի վերադաս մարմինների դիրեկտիվները, նախապատրաստում է ընդհանուր ժողովներն ու նրանցում քննարկվելիք խնդիրները, ընկերության վերադաս մարմինների դիրեկտիվների և ձեռնարկության կազմակերպությունների պլանների հիման վրա մշակում է իր աշխատանքի պլանը 3-ից մինչև 6 ամսվա համար և հսկում է նրանց կատարմանը, ընդունում է ընկերության անդամ դրվել ցանկացողներին, սիստեմատիկ կերպով ստուգում է սեկտորներին և ընկերության առանձին անդամներին տրված հանձնարարությունների կատարումը, լսելով նրանց կատարած աշխատանքների մասին հաշվետվություններ, կատարելով հետազոտություններ և այլ միջոցներով:

Բջիջի նախագահությունը իր կազմից ընտրում է բջիջի նախագահ, գանձապահ և առանձին սեկտորների կազմակերպիչներ:

Ցեխային և հերթափոխային բջիջները յենթարկվում են համագործարանային կոմիտեյին:

Ձեռնարկությունների, հիմնարկների, խորհտնտեսությունների ՄՏԿ-ների, կոլտնտեսությունների, բընակվարձկոոպների և այլոց բջիջների նախագահությունները, վորոնք չեն միացված կոմիտեներով, յենթարկվում են անմիջականորեն Կարմիր Խաչի քաղաքային կամ շրջանային կոմիտեյին:

Բջիջի նախագահության նիստերը տեղի յեն ունենում ամսական յերկու անգամից վոչ պակաս, վորոնց հրավիրվում են մասնակցելու բջիջի ակտիվ անդամները:

Բջիջի նախագահությունը պարբերաբար հրավիրում է ակտիվի լայնացրած խորհրդակցություններ բջիջի

աշխատանքների հրատապ խնդիրների քննարկման, կամպանիաների անցկացման և այլնի համար։

Բջիջի նախագահությունը իր աշխատանքների մասին հաշիվ է տալիս ընդհանուր ժողովի առաջ վոչ պակաս մի անգամից յերեք ամսվա ընթացքում։ Իր հաշվետվությունների և վորոշումների պատճենները ներկայացնում է վերադաս կազմակերպություններին, վորոնց նա հաշիվ է տալիս վեց ամսվա ընթացքում վոչ պակաս մեկ անգամից։

## 4. ԲՋԻՋԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Բջիջի նյութական միջոցները կազմում են՝

ա) անդամակցական մուծանքների մի մասից, վորը 15-ից մինչև 50 տոկոսի չափով հավաքվում է բջիջի կողմից ընկերության անհատական և իրավական անդամներից, վորը վորոշված է լինում Կարմիր Խաչի շրջկոմի կողմից և կախված այն հանգամանքից, թե ձեռնարկություններում, ՄՏԿ-ներում, խորհտնտեսություններում, կոլտնտեսություններում և այլն բջիջի կողմից առողջացման և կենցաղային միջոցառումների վրա վորքան գումար է ծախսվում։

բ) Դեկադայի ընթացքում յեղած բոլոր մուտքերի $20^{0}/_{0}$-ից վոչ պակաս մուծումներից։

գ) Վիճակախաղերի յեկամուտներից (վորոշակի տոկոսով), վորը նշում է վերադաս կազմակերպությունը։

դ) Սանիտարական-պաշտպանության և առողջացման միջոցառումների համար հատկացվող նպատակային մուտքերից, վորոնք խորհրդային, պրոֆեսիոնալ և կոոպերատիվ կազմակերպությունների կողմից, ինչպես



հատկացումների կարգով, նույնպես և պայմանագրերի կնքելու կարգով մուծվում են և մնում ամբողջովին բջիջի տրամադրության տակ։

յե) Հատուկ նպատակների համար սահմանված մուտքերից (մահճակալային ֆոնդ և այլ նպատակների համար), վորոնք ամբողջովին փոխանցվում են վերադաս կազմակերպություններին։

զ) Ներկայացումների, դասախոսությունների և կինո-սեանսների կազմակերպումից, սան-պաշտպանության մարզերից, հեկտարներից, կրծքանշանների վաճառքից, հրատարակություններից և այլ նյութական արժեքներից ստացվող յեկամուտներից։

է) Վերադաս կոմիտեյի հատկացումներից։

Բջիջները ունեն ինքնուրույն բյուջե, վորը կազմվում է իրենց կողմից կոնտրոլ թվերի լայն վերամշակման հիմունքներով (վերադաս կազմակերպությունների կողմից ստացված առաջադրանքներով)։

Բջիջի հավաքած և ստացած բոլոր գումարները ոգտագործվում են նրա կողմից ճշտորեն համապատասխանեցնելով վերադաս կազմակերպությունների կողմից հաստատված բյուջեյի հետ։

Ծանոթություն. Բջիջների կողմից բյուջեյի մեջ, նրա գործադրման ընթացքում փոփոխություններ կարող են մտցվել վերադաս կազմակերպությունների թույլտվությամբ։

## 5. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՎԵՐՍՏՈՒԳՈՒՄ

Բջիջը իր գործունեության ծավալից յելնելով, ֆինանսական ու նյութային հաշվարկումները տանում է պարզեցրած կամ ավարտված տեսքի ըստ վերադաս կազմակերպությունների ցույց տված ձևերի ու ցուցումների։

Բջիջի ֆինանսական և տնտեսական գործունեությունը պետք է ընթանա տեղական վերստուգիչ հանձնաժողովի մշտական հսկողության տակ։ Բջիջի վերստուգիչ հանձնաժողովի վրա դրվում է հետևյալ պարտականությունները։

ա) Առանձին դրամական միջոցների ամենամսյա ստուգում (ինչպես գանձապահի, նույնպես և ընթացիկ, հաշվի), ինչպես և անդամավճարներ հավաքողների հաշիվների ստուգում։

բ) Ֆինանսական հաշվետվության ըստ կվարտալների (փաստաթղթերի համաձայն) մանրամասն ստուգում։

գ) Եզրափակումներ տալը բոլոր այն հաշվային տեղեկանքներին, վորոնք ներկայացվում են վերադաս կազմակերպության։

Դրամական միջոցների և նյութական արժեքների հափշտակումների համար հանցավորներին անմիջապես պետք է հեռացնել աշխատանքից և յենթարկել խիստ պատասխանատվության։

## 6. ԲՋԻՋԻ ԼԻԿՎԻԴԱՑԻԱՆ

Բջիջը լիկվիդացիայի յե յենթարկվում.

ա) համաձայն վերադաս կազմակերպությունների վորոշման։

բ) Տվյալ ձեռնարկության կամ հիմնարկության փակման դեպքում։

Բջիջի ամբողջ մնացած գույքը (դրամական միջոցները և այլ արժեքավոր իրերը) նախագահության կամ լիկվիդացիոն հանձնաժողովի կողմից ըստ վերգրի հանձնվում է Կարմիր Խաչի շրջանային կոմիտեյին։



# ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1) Ընկերության անդամ կարող են լինել միայն աշխատավորները, վորոնք համաձայն ԽՍՀՄ-ի սահմանադրության ոգտվում են ընտրական իրավունքից, վորոնք միութենական հանրապետությունների քրեական որենսգրքով չեն զրկված իրավունքներից և նրանց ընտանիքի անդամները, վորոնց տարիքը հավասար է 16-ի։

Ծանոթություն 1. Յերեխաները 10-ից մինչև 16 տարեկան հասակը կարող են լինել ընկերության յերիտասարդ. բարեկամները, վորոնց կազմակերպությունը աշխատում է հատուկ մշակված կանոնադրությամբ։

2. Տնտեսուհիները և այլ կատեգորիայի աշխատավորները, վորոնք չեն աշխատում արտադրության մեջ, խորհտնտեսություններում, կոլտնտեսություններում և այլն պետք է լինեն իրենց բնակված վայրի Կարմիր Խաչի բջիջի անդամ (բնակվարձկոոպի, բնակկառավարչության և այլն)։

2. Ընկերության ամեն մի անդամ պարտավոր է.

ա) Լինել իր աշխատած վայրի Կարմիր Խաչի բջիջում, ակտիվ կերպով մասնակցել ընկերության ամեն տեսական աշխատանքներին, անդամավճարները մուծել կանոնավոր կերպով։

բ) Աշխատավորության մեջ պարզաբանել ընկերության անելիքներն ու նպատակը, կենտրոնացնելով նրանց գլխավոր ուշադրությունը յերկրի սանիտարական պաշտպանության ուժեղացման և աշխատավորության աշխատանքի և կենցաղային պայմանների առողջապահական խնդիրների վրա։

գ) Ակտիվ մասնակցություն ունենալ ընկերության բոլոր կոնկրետ միջոցառումներին։

դ) Անցնել ռազմա-սանիտարական գիտելիքների պարտադիր մինիմումը և սիստեմատիկ կերպով այն յուրացնել։

յե) Աշխատավորության ներգրավել ընկերության անդամների շարքերը, լծել նրանց ակտիվ աշխատանքների, կազմակերպել Կարմիր Խաչի բջիջներ իրենց աշխատանքի տեղերում։

զ) Ակտիվ կերպով օժանդակել ընկերության սանպաշտպանության համար միջոցների հավաքելու գործում։

է) Խնամքով վերաբերվել ընկերության դրամական և գույքային ունեցվածքին և ակտիվ կերպով պայքարել վատնումների, կողոպտումների և զեղծարարությունների դեմ։

ը) Կատարել կանոնադրության պահանջները և ընկերության ղեկավար մարմինների վորոշումները։

3. Ընկերության ամեն մի անդամ օգտվում է հետևյալ իրավունքներից։

ա) Ընկերության անդամների ընդհանուր ժողովներին օգտվում է վճռական ձայնի իրավունքով, համագումարներին և կոնֆերենցիաներին կարող է ընտրվել և ուղարկվել վորպես պատգամավոր, կարող է ընտրվել բոլոր ղեկավարող օրգաններում։

բ) Կարմիր Խաչի դասընթացներն ու դպրոցներն ուղարկելու համար նախապատվություն է տրվում ընկերության անդամին։

գ) Արտոնյալ կերպով օգտվում է Կարմիր Խաչի գրադարաններից, ցուցահանդեսներից, բուժպրոֆիլակ-



տիկ և սան-գիգիենիկ հիմնարկություններից, վորոնք սահմանվում են տեղական կազմակերպությունների կողմից։

դ) Իրավունք ունի կրելու ընկերության անդամներին վերապահված կրծքանշանը։

4 Ընկերության անդամները համարվում են հեռացված հետևյալ դեպքերում.

ա) Ինքնակամ հեռանալու դեպքում։

բ) Վեց ամսվա ընթացքում անդամավճարը չվճարելու դեպքում։

գ) Ընկերության անդամին վարկաբեկող վորևե արարքի համար։

դ) Կանոնադրության խախտման և ընկերության անդամի պարտականությունների ինչպես և ղեկավար մարմինների դիրեկտիվները սիստեմատիկ կերպով չկատարելու դեպքում։

5. Ընկերությունից հեռանալու բոլոր դեպքերում անդամագրքույկը անպայման պետք է հանձնել բջիջին կամ շրջանային կոմիտեյին։

ՀՀ Ազգային գրադարան
NL0404882

1934г.—

1
3554